ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 մայիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

57
(3266)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական ուժերը հերթով ներկայացնում են իրենց նախընտրական ցուցակները, իսկ հանրության ուշադրության կենտրոնում արդեն ոչ միայն անուններն են, այլեւ այդ անունների անցած ճանապարհն ու կուտակած կարողությունը: «Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել առաջադրված 19 կուսակցությունների եւ դաշինքների առաջնորդներին՝ նրանց կենսագրությունն ու ունեցվածքը:

Այս անգամ ներկայացնում ենք «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը, որի ընտրացուցակը գլխավորում է կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանը՝ ընտրություններին մասնակցելով 19 համարի ներքո:

Էդմոն Մարուքյանի հայտարարագրի համաձայն՝ նա ունի ընդհանուր 7 միավոր անշարժ գույք, որոնք ներառում են բնակարաններ Երեւանում եւ Վանաձորում, ավտոտնակներ, ավտոկայանատեղիներ եւ ոչ բնակելի տարածքներ: Անշարժ գույքի մի մասը ձեռք է բերվել գնման եղանակով, իսկ մի մասը՝ նվիրատվությամբ:

Տրանսպորտային միջոցներից Մարուքյանը տվյալ տարվա սկզբում ունեցել է 2013 թվականի արտադրության TOYOTA մակնիշի ավտոմեքենա, որը վաճառվել է 5,200,000 դրամով: 2024 թվականին նա ձեռք է բերել նոր TOYOTA մակնիշի ավտոմեքենա՝ 12,000,000 դրամ արժողությամբ:

Բանկային հաշիվներում առկա են հետեւյալ միջոցները՝ 22,033,762.40 դրամ, 2,643.75 եվրո եւ 1,380 ԱՄՆ դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմում են 2,000,000 դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա վերջում կազմել է 19,930,682.1 դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 2,904,578 դրամ:

⇨ էջ 3



Մայիսի 8-ին մեկնարկեց նախընտրական քարոզարշավը: 19 քաղաքական ուժ մասնակցելու է հունիսի 7-ին տեղի ունենալիք համապետական ընտրություններին՝ հանրությանն առաջարկելով իրենց գաղափարներն ու քաղաքական ծրագրերը: ArmLur.am-ը ներկայացնում է, թե որ ուժը որտեղից եւ ինչպես է մեկնարկելու իր քարոզարշավը: «Քաղաքացիական պայմանագիր»-ն իր քարոզարշավը սկսելու է հանրապետության հարավից՝ Սյունիքի մարզից, «Ուժեղ Հայաստան»-ը՝ ՀՀ ԱԺ դիմացից՝ Նարեկ Կարապետյանի ասուլիսով, «Հայաստան» դաշինքն իր քարոզարշավը մեկնարկելու է համայն հայության հոգեւոր կենտրոնից՝ Էջմիածնից: «Միասնության թեւեր»-ն սկսում է իր քարոզարշավը Իջեւանի Գոշավանք վանական համալիրից: ՀԱԿ-ից ArmLur.am-ին տեղեկացրին, որ, ըստ էության, արդեն սկսված է քարոզարշավը: «ՀԱԿ-ը մայիսի 7-ին ավելի քան երկու ժամ քննարկումից հետո ընդունել եւ ապա ներկայացրել է իր նախընտրական ծրագիրը: Մայիսի 9-ին ՀԱԿ-ի անդամներն այցելելու են «Հաղթանակ»-ի զբոսայգի՝ հարգանքի տուրք մատուցելու հաղթանակները կերտած հերոսների հիշատակին»,-փոխանցեցին մեզ ՀԱԿ-ից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը «Հետք»-ի հետ զրույցում հայտարարել էր, թե ցորենը Հայաստան է ներկրվում «ուղիղ Ադրբեջանից»: Ավելին՝ լրագրողի ճշտող հարցից հետո, երբ նշվել էր, որ խոսքը Վրաստանի տարածքով տարանցման մասին է, պատգամավորը կրկին պնդել էր՝ ոչ, «ուղիղ Ադրբեջանից» ենք ցորեն ներկրում, ապաշրջափակումը հենց դա է: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած պաշտոնական տվյալները միանգամայն այլ պատկեր են ցույց տալիս: ՊԵԿ-ը հայտնել է, որ 2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2026 թվականի մայիսի 4-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծված ԱՏԳ ԱԱ 1001 ծածկագրով ցորենի վերաբերյալ տվյալները կազմվել են ապրանքների հայտարարագրերի, ինչպես նաեւ տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված վիճակագրական ձեւերի հիման վրա: Այդ տվյալներով՝ նշված ժամանակահատվածում ցորենի ներմուծման աղյուսակում Ադրբեջանը չի նշվում ո՛չ որպես արտահանող երկիր, ո՛չ որպես ծագման երկիր:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մինչ Շիրակի մարզը շարունակում է մնալ Հայաստանի ամենաաղքատ մարզերից մեկը, ԿԳՄՍ նախարարությունը հարյուր միլիոնավոր դրամներ է ուղղել մեկ համերգային ծրագրի կազմակերպմանը՝ Կառավարության պատվիրակմամբ: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն «Գրավիթի Փրոդաքշն» ՍՊԸ-ն ստացել է 242 միլիոն 134 հազար դրամ դրամաշնորհ, իսկ ֆինանսական հաշվետվության փաստաթուղթը հրապարակված է դատարկ՝ չլրացված վիճակում: Եւ սա դեռ ամբողջը չէ: Կառավարության որոշմամբ նախատեսվել էր 2026 թվականի պետական բյուջեի վերաբաշխման միջոցով շուրջ 393 միլիոն դրամ հատկացնել ԿԳՄՍ նախարարությանը՝ համերգի կազմակերպման ծախսերը հոգալու համար: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնական հրապարակումները եւ արձանագրել հերթական աղմկահարույց ֆինանսական պատկերը: Պարզվում է՝ ԿԳՄՍ նախարարությունը «Գրավիթի Փրոդաքշն» ՍՊԸ-ին տրամադրել է 242 միլիոն 134 հազար դրամ դրամաշնորհ: Այս գումարը ներկայիս փոխարժեքով կազմում է մոտ 620 հազար դոլար: Սակայն ամենաուշագրավը ոչ միայն գումարի չափն է, այլեւ այն, որ հրապարակված ֆինանսական հաշվետվության փաստաթուղթը, ըստ էության, դատարկ է՝ առանց բովանդակային լրացման:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՇԱՏ ՀՍՏԱԿ Է»

ArmLur.am-ը զրուցել է «Հայաքվե» ազգային-բաղաքացիական միավորման համակարգող Ավետիք Չալաբյանի հետ:

- Պարոն Չալաբյան, մեկնարկեց քարոզարշավը, եւ «Ուժեղ Հայաստանը» որոշեց այն սկսել ասուլիսով: Դուք եւս այստեղ եք, ինչպես նաեւ «Հայաքվեի» անդամները: Ի՞նչ աջակցություն եք հայտնում «Ուժեղ Հայաստանին»:

- Եթե հիշում եք, ապրիլի 29-ին «Ուժեղ Հայաստանի» հետ ստորագրեցինք համագործակցության հուշագիր, որով պատրաստակամություն հայտնեցինք մեր քարոզչական եւ կազմակերպչական ռեսուրսները օգտագործել այս քարոզարշավում՝ ի աջակցություն «Ուժեղ Հայաստանի»: Մեր նպատակը շատ հստակ է՝ հասնել երկրում իշխանափոխության եւ թույլ չտալ, որպեսզի գործող, մեր գնահատմամբ, թրքամետ վարչախումբը վերարտադրվի ընտրությունների միջոցով: Դրա փոխարեն ցանկանում ենք, ի վերջո, Հայաստանում ձեւավորել ազգային իշխանություն: Այս նպատակով մենք մեր ունեցած թե՛ քարոզչական, թե՛ կազմակերպչական ռեսուրսները կներդնենք քարոզարշավում:

- Ինչպե՞ս եք գնահատում «Ուժեղ Հայաստանի» հնարավորությունները:

- Գիտեք, մի փոքր տեխնիկական հարց եք տալիս, բայց ակնհայտ է հետեւյալը. ընդդիմադիր դաշտում «Ուժեղ Հայաստանը» այսօր հանդիսանում է առաջատար ուժերից մեկը: Ցանկացած սոցիոլոգիական հարցում այդ պատկերն է ցույց տալիս: Ուստի մեր նպատակն է, որ մեր մասնակցությամբ «Ուժեղ Հայաստանի» առաջատար դիրքերն էլ ավելի ամրապնդվեն: Մենք ցանկանում ենք, որ այս քաղաքական ուժը ոչ միայն հանրային կարծիքի առաջատար լինի, այլեւ ընտրություններում հնարավորինս շատ ձայներ հավաքի՝ մինչեւ այն մակարդակը, որը հնարավորություն կտա ձեւավորել ազգային իշխանություն:

- Պարոն Չալաբյան, մինչ այս դուք համագործակցում էիք նաեւ «Միասնության թեւերի» հետ, սակայն կարճ ժամանակ անց այդ համագործակցությունը դադարեցվեց: Ի՞նչն էր պատճառը՝ անձնական ամբիցիանե՞ր, թե՞ գաղափարական հակասություններ:

- Մենք «Միասնության թեւերին» երբեւէ չենք միացել: Մենք նրանց հետ ստորագրել էինք համագործակցության հուշագիր, որի շրջանակում պատրաստակամություն էինք հայտնել միավորել ուժերը եւ հանդես գալ միասին: Սակայն, երբ հասանք այն փուլին, որտեղ պետք է պայմանավորվեինք՝ ինչպես են միավորվում ուժերը, ինչպես է ձեւավորվում ընդհանուր ծրագիրը, ինչպես են բաշխվում դերերը եւ այլն, չկարողացանք համաձայնության գալ: Գործընկերների հետ պայմանավորվել ենք այդ պատճառների մասին հրապարակային չխոսել, բայց կարող եմ ասել, որ բաժանվել ենք շատ քաղաքակիրթ եւ փոխադարձ հարգանքով: Պետք է հասկանալ նաեւ, որ «Միասնության թեւերի» հետ ստորագրված համագործակցության հուշագիրը եւ այն հուշագիրը, որը հիմա ստորագրել ենք «Ուժեղ Հայաստանի» հետ, տարբեր բնույթ ունեն:

Այն դեպքում խոսքը միասնական քաղաքական ուժ ձեւավորելու մասին էր, իսկ այս դեպքում արդեն ձեւավորված քաղաքական ուժին մենք տրամադրում ենք մեր աջակցությունը: Մենք այդ դաշինքի անդամը չենք, այլ աջակցող կողմ: Տարբերությունն էական է, որովհետեւ առաջին դեպքում պատասխանատվության մակարդակն ամբողջովին կիսվում էր, իսկ այստեղ մենք հանդես ենք գալիս որպես աջակից:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ Է ՀՐԱՎԻՐԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 11-ին՝ ժամը 11:00-ին, Ազգային Ժողովը արտահերթ նիստ է հրավիրել:

Նիստը հրավիրել է ԱԺ ՔՊ խմբակցությունը, որի կազմակերպչական հարցերով զբաղվել է ԱԺ ՔՊ-ական Ծովինար Վարդանյանը: Մենք տեղեկացանք, որ մի շարք օրենքի նախագծերի փաթեթներ են քննարկվելու եւ ընդունվելու: Եւ այսպես՝

1) «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,

2) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,

3) «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների,

4) «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»,

5) «Անձը հաստատող փաստաթղթի մասին», «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին», «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» եւ «Քաղաքական ապաստանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԺԱՆՔՆԵՐ

Մինչ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ամիսներ շարունակ հանրությանը համոզում է «խաղաղության դարաշրջանի» մեկնարկի մասին, Գեղարքունիքի մարզում արդեն կազմակերպվում են «ազդարարում, տարահանում եւ պատսպարում» թեմայով գործնական վարժանքներ:

ArmLur.am-ը Վարդենիսի համայնքապետարանից տեղեկացավ, որ մայիսի 8-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք բնակավայրում անցկացվում են «Տարածաշրջանին բնորոշ արտակարգ իրավիճակները, կանխարգելումը եւ քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերը» թեմայով զրույց-քննարկում, ինչպես նաեւ «ազդարարում, տարահանում եւ պատսպարում» թեմայով գործնական վարժանք: Թեեւ պաշտոնական ձեւակերպումներով սա ներկայացվում է որպես քաղաքացիական պաշտպանությանն ուղղված հերթական միջոցառում, այն ամեն դեպքում հարցեր է առաջացնում Նիկոլ Փաշինյանի իշխանության վարած քաղաքականության ֆոնին: Եթե «խաղաղության դարաշրջանն» անխուսափելի է, մարզերում ինչու են կազմակերպվում տարահանման եւ պատսպարման գործնական վարժանքներ:

Հատկապես սահմանամերձ Գեղարքունիքում նման միջոցառումները դժվար է ընկալել որպես պարզապես «պլանային ուսուցում»: Տեղացիների համար դրանք հիշեցնում են, որ անվտանգության սպառնալիքները ոչ միայն չեն վերացել, այլեւ շարունակում են մնալ օրակարգում՝ անկախ իշխանության հնչեցրած լավատեսական հայտարարություններից:

ArmLur.am-ը հիշեցնում է, որ տարածաշրջանի 3200 հեկտար հողերը 2021-ի մայիսից շարունակում են օկուպացված մնալ Ադրբեջանի կողմից: Իշխանության հաղորդած «խաղաղության» ուղերձների եւ իրական անվտանգային քայլերի միջեւ առկա հակասությունը հերթական անգամ ցույց է տալիս, որ կառավարությունն ինքն էլ լիարժեք չի հավատում տարածաշրջանային կայունության վերաբերյալ սեփական հայտարարություններին:

11 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքի ուսումնասիրությունը ուշագրավ պատկեր է բացահայտում. ArmLur.am-ը նկատեց, որ վերջին 22 օրերի ընթացքում կառույցի հրապարակած 18 հաղորդագրություններից 11-ը վերաբերում են բացառապես «Ուժեղ Հայաստան» կուսակցության եւ նրա գրասենյակների կողմից ենթադրյալ ընտրակաշառքների գործերին: ArmLur.am-ը ուսումնասիրել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում ապրիլի 15-ից մինչ օրս հրապարակված նորություն-հաղորդագրությունները եւ արձանագրել ուշագրավ անհամաչափություն: Ընդամենը 22 օրում կառույցը հրապարակել է 18 պաշտոնական հաղորդագրություն, որոնցից 11-ը վերաբերում են ընդդիմադիր ֆավորիտ համարվող «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներին կամ նրանց գրասենյակներում ընտրակաշառք բաժանելու ենթադրյալ դեպքերին: Ընդ որում՝ հաղորդագրությունների բովանդակությունն ու պարբերականությունը այնպիսի տպավորություն են ստեղծում, թե կոմիտեի հիմնական եւ գրեթե միակ զբաղվածությունը դարձել է հենց այդ քաղաքական ուժը: Մինչդեռ քաղաքական դաշտում ընտրություններին մասնակցող մյուս 18 ուժերի մասով նույն ժամանակահատվածում որեւէ բացահայտում, քրեական վարույթի ընթացքի մասին հաղորդագրություն կամ ակտիվ գործողության վերաբերյալ տեղեկություն չի հրապարակվել: Սա արդեն պարզապես վիճակագրություն չէ: Սա քաղաքական ենթատեքստ ունեցող պատկեր է: Արդյո՞ք Հակակոռուպցիոն կոմիտեն գործում է որպես անկախ մարմին, թե՞ աստիճանաբար վերածվում է քաղաքական օրակարգ սպասարկող գործիքի: Ի վերջո, եթե ընտրակաշառքի դեմ պայքարը իրական, անաչառ եւ համատարած է, ապա պաշտոնական լրահոսում միայն մեկ քաղաքական ուժի անուն չպետք է լիներ, քանի որ իշխող ուժը գոնե հրապարակավ ընտրական խոստումներ է շռայլում, աշխատանք ու փող խոստանում գյուղական հանդիպումների ժամանակ, որոնք եւս կարող են դիտարկվել որպես ընտրակաշառք:

11 ՆԱԽԱՐԱՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մայիսի 7-ի որոշմամբ՝ 28 աշխատանքային օրվա կտրվածքով արձակուրդի մեջ կգտնվեն՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՀ ՄԱՐԶՊԵՏՆԵՐՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ ԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ մայիսի 7-ից ՀՀ մարզպետներին 28 աշխատանքային օրվա կտրվածքով տրամադրվել է չվճարվող արձակուրդ: Մարզպետները կգտնվեն արձակուրդում 2026 թվականի մայիսի 8-27-ը (ներառյալ) եւ մայիսի 29-ից հունիսի 5-ը (ներառյալ) ժամանակահատվածում:

ArmLur.am-ը ներկայացնում է, թե որ մարզպետին ով կփոխարինի այս ժամանակահատվածում: Այսպիսով՝ վարչապետի որոշմամբ արձակուրդ է տրամադրվել ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղահրամանյանին, ում կփոխարինեն ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալներ Հայկ Հարությունյանը եւ Նարե Ղազարյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանին, ում կփոխարինի ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Արտավազդ Նազարեթյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանին, ում կփոխարինի ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Արմեն Գրիգորյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանին, ում կփոխարինի ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վասակ Վարդանյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, ում կփոխարինի ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, ում կփոխարինի ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին, ում կփոխարինի ՀՀ Լոռու մարզպետ Արսեն Ղարիբյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանին, ում կփոխարինի ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանը:

Արձակուրդ է տրամադրվել ՀՀ Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանին, ում կփոխարինի ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանը:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՀՐԱԴԱԴԱՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԱՄՆ-ի կողմից Իրանի վրա նոր հարվածներից հետո ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը պնդում է, որ հրադադարը ուժի մեջ է, հաղորդում է ABC News-ը: «Հրադադարը ուժի մեջ է: Այն ուժի մեջ է», - հայտարարել է ԱՄՆ նախագահը: Ավելի վաղ Fox News-ի լրագրող Ջենիֆեր Գրիֆինը իր X օգտահաշվում հայտնել էր, որ ԱՄՆ-ն հարձակվել է Իրանի Քեշմ նավահանգստի եւ Բանդար Աբբաս քաղաքի վրա: Իրանական Mehr News գործակալության հաղորդմամբ՝ Իրանի հակաօդային պաշտպանությունը խոցել է երկու ինքնաթիռ Բանդար Աբբաս քաղաքի եւ Իսլամական Հանրապետության հարավումգտնվող Քեշմ կղզու վրա:

ԻՆՉ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական ուժերը հերթով ներկայացնում են իրենց նախընտրական ցուցակները, իսկ հանրության ուշադրության կենտրոնում արդեն ոչ միայն անուններն են, այլեւ այդ անունների անցած ճանապարհն ու կուտակած կարողությունը: «Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել առաջադրված 19 կուսակցությունների եւ դաշինքների առաջնորդներին՝ նրանց կենսագրությունն ու ունեցվածքը:

Այս անգամ ներկայացնում ենք «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը, որի ընտրացուցակը գլխավորում է կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանը՝ ընտրություններին մասնակցելով 19 համարի ներքո:

Էդմոն Մարուքյանի ունեցվածքը

Էդմոն Մարուքյանի հայտարարագրի համաձայն՝նա ունի ընդհանուր 7 միավոր անշարժ գույք, որոնք ներառում են բնակարաններ Երեւանում եւ Վանաձորում, ավտոտնակներ, ավտոկայանատեղիներ եւ ոչ բնակելի տարածքներ: Անշարժ գույքի մի մասը ձեռք է բերվել գնման եղանակով, իսկ մի մասը՝նվիրատվությամբ:

Տրանսպորտային միջոցներից Մարուքյանը տվյալ տարվա սկզբում ունեցել է 2013 թվականի արտադրության TOYOTA մակնիշի ավտոմեքենա, որը վաճառվել է 5,200,000 դրամով: 2024 թվականին նա ձեռք է բերել նոր TOYOTA մակնիշի ավտոմեքենա՝ 12,000,000 դրամ արժողությամբ:

Բանկային հաշիվներում առկա են հետեւյալ միջոցները՝22,033,762.40 դրամ, 2,643.75 եվրո եւ 1,380 ԱՄՆ դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմում են 2,000,000 դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա վերջում կազմել է 19,930,682.1 դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 2,904,578 դրամ:

Անցած ուղին

Էդմոն Մարուքյանը ծնվել է 1981 թվականի հունվարի 13-ին Վանաձորում: 2002 թվականին ավարտել է Մոսկվայի կոմերցիայի եւ իրավունքի ինստիտուտի իրավագիտության բաժինը, 2006 թվականին՝ Վարշավայի մարդու իրավունքների բարձրագույն դասընթացը, 2007 թվականին՝ՀՀ պետական կառավարման ակադեմիան, իսկ 2010 թվականին՝ Մինեսոտայի համալսարանի իրավաբանական դպրոցը՝ ստանալով մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի մագիստրոսի աստիճան:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 2002-2004 թվականներին՝ որպես «Մեդիա Գրուպ» ՀԿ-ի իրավաբանական բաժնի ղեկավար: 2007-2008 թվականներին դասավանդել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, իսկ 2007-2012 թվականներին եղել է «Պոպուլեքս» ՍՊԸ փաստաբանական գրասենյակի գործընկեր եւ փաստաբան: 2009 թվականին աշխատել է որպես ավագ իրավաբան Լոռու մարզի ՇՊԱԿ-ում: 2008 թվականից ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

2015 թվականին հիմնադրել է «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը:

2012-2017 թվականներին եղել է Ազգային Ժողովի պատգամավոր, այնուհետեւ 2017-2018 թվականներին՝ կրկին պատգամավոր «Ելք» դաշինքի կազմում: 2018 թվականին ընտրվել է ԱԺ պատգամավոր «Լուսավոր Հայաստան» կուսակցության ցուցակով:

2022 թվականի մարտի 14-ին Նիկոլ Փաշինյանի հրամանով նշանակվել է հատուկ հանձնարարություններով դեսպան, սակայն 2024 թվականի մարտին նա հրաժարական է ներկայացրել՝նշելով արտաքին քաղաքական մի շարք հարցերի շուրջ կառավարության հետ ունեցած տեսլականների տարբերությունները:

Հրաժարականից հետո նա ընդգծել է, որ այդ տարաձայնությունները անհնարին են դարձրել իր հետագա ներգրավվածությունը արտաքին քաղաքական աշխատանքներում:

Հիշեցնենք, որ Էդմոն Մարուքյանը քաղաքական թիմով՝ իր կուսակցությունով դաշտ է մտել ընդդիմադիր «Ելք» դաշինքի շրջանակում՝համագործակցելով նաեւ Նիկոլ Փաշինյանի հետ: Սակայն դաշինքի փլուզումից հետո քաղաքական ուղիները բաժանվեցին. Փաշինյանի թիմը ստանձնեց իշխանությունը:

Հետագայում՝ ՔՊ իշխանության օրոք, Մարուքյանը նշանակվեց հատուկ հանձնարարություններով դեսպան, ինչը դիտարկվեց նախկին քաղաքական հակառակորդների միջեւ համագործակցության փուլ: Սակայն այդ համագործակցությունը երկար չտեւեց. 2024-ին նա հրաժարական տվեց՝հայտնելով արտաքին քաղաքական հարցերի շուրջ իշխանության հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունների մասին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՉ Է ԱՐԵԼ ԸՆԴՎԶԵԼ

Ֆրանսիական «Պատրիոտներ» կուսակցության առաջնորդ Ֆլորիան Ֆիլիպոն կոշտ հայտարարությամբ է հանդես եկել Ուկրաինային տրամադրվող ֆինանսական աջակցության վերաբերյալ՝ ֆրանսիացիներին կոչ անելով «ընդվզել» այդ քաղաքականության դեմ: X սոցիալական ցանցում հրապարակված գրառման մեջ քաղաքական գործիչը հայտարարել է, թե Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին գտնվում է «խոշոր կոռուպցիոն համակարգի կենտրոնում»: Ֆիլիպոյի խոսքով՝եվրոպական երկրները շարունակում են միլիարդավոր եվրոներ հատկացնել Կիեւին, մինչդեռ այդ միջոցները, ըստ նրա, նպաստում են կոռուպցիայի խորացմանը: Նա նշել է, որ վերջերս հաստատվել է եւս 17 միլիարդի ֆինանսավորում, եւ հայտարարել, թե այդ գումարների մի մասը հետագայում վերադառնում է Եվրոպա՝«ատկատների» տեսքով՝ պատերազմական քաղաքականություն վարող շրջանակներին: Ֆրանսիացի քաղաքական գործիչը նաեւ պնդել է, որ «Բրյուսելի շրջանակները» շահույթ են ստանում Ուկրաինային տրամադրվող օգնությունից: Միաժամանակ նա կրկին քննադատել է Եվրոպայի ներկայիս քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ: Ավելի վաղ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ Եվրոպայում որոշ քաղաքական ուժեր բացահայտորեն հանդես են գալիս Ռուսաստանի դեմ նոր հակամարտության օգտին:

80 ՉՎԵՐԹ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Ռուսաստանի հարավային օդանավակայաններում գործունեության դադարեցման պատճառով առնվազն 14,000 ուղեւոր սպասում է թռիչքների, հայտնել է Ռուսաստանի տուրօպերատորների ասոցիացիան (ATOR): Մոսկվայի ժամանակով ժամը 10:00-ի դրությամբ ավելի քան 80 չվերթ արդեն հետաձգվել կամ չեղարկվել է: Իրավիճակն առավել կրիտիկական է Սոչիում, որտեղ նոր սահմանափակումները սրել են վերջին երկու օրերի ընթացքում թռիչքների ժամանակացույցի զգալի խափանումները:

Ասոցիացիան հայտարարել է, որ հետաձգված չվերթների թիվը կաճի առաջիկա ժամերին:

9 ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերել, որ 44-ամյա եւ 36-ամյա եղբայրները, ներգրավելով այլ անձանց, նախապատրաստում են 32-ամյա երիտասարդի սպանությունը:

Տվյալներ են ձեռք բերվել, որ 32-ամյա երիտասարդը հայհոյել է եղբայրներից մեկին, ինչի մասին նա իմանալով եւ գտնվելով արտերկրում հրահանգել է Նոր Հաճընում բնակվող 44-ամյա եղբորը վրեժխնդրության նպատակով հաշվեհարդար տեսնել երիտասարդի հետ:

44-ամյա տղամարդը մտադրությունն իրականացնելու նպատակով ձեւավորել է հանցավոր խումբ, որի անդամները, զինվելով ատրճանակներով եւ ինքնաձիգներով, Նոր Հաճընում սկսել են որոնել 32-ամյա երիտասարդին:

Վերջինս մտերիմների հետ Նոր Հաճընի քաղաքում մեքենայով շրջելիս նկատել է 44-ամյա տղամարդուն եւ իր մոտ ապօրինի պահվող հրազենով կրակոցներ արձակել ու դիմել փախուստի: 44-ամյա տղամարդը խմբի անդամների հետ հետապնդել է 32-ամյա երիտասարդին, կանգնեցրել մեքենան, սակայն, չհայտնաբերելով նրան, զենքի սպառնալիքի ներքո ծեծի է ենթարկել երկու ընկերներին:

Պարզվել է նաեւ, որ 44-ամյա տղամարդն իր կողմնակիցների հետ սոցիալական հարթակներից մեկում ստեղծել է խումբ՝ նպատակ ունենալով վերահսկել 32-ամյա տղամարդու շարժը եւ հարմար պահի տեսախցիկների ու մարդկանց բացակայության պայմաններում կյանքից զրկել նրան:

Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում դատարանի որոշմամբ խուզարկություններ են կատարվել 44-ամյա տղամարդու, հետապնդվող երիտասարդի եւ հանցավոր խմբի անդամների բնակարաններում:

Հանցավոր խմբի 3 անդամների բնակարաններից հայտնաբերվել են «Կալաշնիկովի» ինքնաձիգ իր պահեստատուփով, օդաճնշիչ հրացան, տարբեր տրամաչափի 86 փամփուշտներ, սվին դանակ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում միջադեպին մասնակից 9 անձ հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին, ապա տեղափոխվել ձերբակալվածների պահման վայրեր:Ձեռնարկվում են միջոցառումներ հանցավոր խմբի մյուս անդամներին հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի մարտի 11-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ ֆիզիկական անձի, երրորդ անձ՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքի՝ Իջեւանի Վալանսի փողոց թիվ 1/30 հասցեում գտնվող՝ 0.04 հա մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը դադարեցնելու դահանջով: Հողամասի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը 2 միլիոն 730 հազար դրամ է:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի մարտի 16-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության հայցը: Վճռով դադարեցվել է Վալանսի փողոց թիվ 1/30 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը:

Հակակոռուպցիոն դատարանի նշված վճիռը ստացել է օրինական ուժ:

Գլխավոր դատախազության դիմումի հիման վրա՝ Կադաստրի կոմիտեն 2026 թվականի մայիսի 5-ին դադարեցրել է հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Իջեւան համայնքին:

Այսպիսով, մինչ այսօր Իջեւան համայնքին են վերադարձվել Տավուշի մարզի Իջեւան համայնքի քաղաքային զբոսայգու հետեւյալ գույքերը՝

1. Վալանսի փողոց թիվ 1/30 հասցեում գտնվող՝ 0.04 հա մակերեսով հողամասը,
2. Թատերական փողոց 18 հասցեում գտնվող՝ 19 քմ մակերեսով հողամասը,
3. Թատերական փողոցի 18/7 հասցեում գտնվող՝ 350.1 քմ մակերեսով հողամասը,
4. Թատերական փողոցի 18/5 հասցեում գտնվող՝ 19.8 քմ մակերեսով հողամասը,
5. Անկախության փողոց 1/55 հասցեում գտնվող՝ 436 քմ մակերեսով հողամասը,
6. Վալանսի փողոցի 1/29 հասցեում գտնվող՝ 0.06 հա մակերեսով հողամասը,
7. Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ 0.001 հա մակերեսով հողամասը,
8. Անկախության 1/54 հասցեում գտնվող՝ 436.8 քմ մակերեսով հողամասը,
9. Անկախության 1/41 հասցեում գտնվող՝ 1500 քմ մակերեսով հողամասը,
10. Թատերական փողոցի 18/6 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը,
11. Վալանսի փողոցի 1/27 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը,
12. Վալանսի փողոցի 1/28 հասցեում գտնվող՝ 351 քմ մակերեսով հողամասը,
13. Թատերական 18/3 հասցեում գտնվող՝ 18 քմ մակերեսով հողամասը:
14. Թատերական 18/2 հասցեում գտնվող՝ 12 քմ մակերեսով հողամասը:

Բացի այդ, դատախազական ներգործության արդյունքում՝ Իջեւան համայնքի տիրապետմանն ու օգտագործմանն է վերադարձվել քաղաքային զբոսայգու շատրվաններին հարակից 0.03 հա մակերեսով հողամասը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿՈՂՊՈՊՈՒՏԻ ԴԵՊՔԵՐ

Ապրիլի 30-ին Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ գիշերը՝ ժամը 1-ին, Հրանտ Վարդանյան փողոցի հասցեներից մեկի մոտ անհայտ անձը բացահայտ հափշտակել է իր բջջային հեռախոսը՝ պատճառելով մոտ 200 հազար դրամի վնաս:

Նույն օրը հաղորդում էր ստացվել նաեւ Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժնում: Հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ գիշերը՝ ժամը 4.50-ի սահմաններում, Տիգրան Մեծի պողոտայի հասցեներից մեկի մոտ երկու երիտասարդ փորձել էին կողոպտել իրեն, սակայն հանդիպելով դիմադրության՝ հանցագործությունն ավարտին չէին հասցրել:

Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին կողոպուտի վերաբերյալ հաջորդ հաղորդումը ստացվել էր մայիսի 5-ին. 19-ամյա երիտասարդը հայտնել էր, որ ապրիլի 28-ին Գարեգին Նժդեհի փողոցի շենքերից մեկի մոտ երկու երիտասարդ բացահայտ հափշտակել են իր բջջային հեռախոսը՝ պատճառելով 100 հազար դրամի վնաս:

Շենգավիթի եւ Էրեբունու համայնքային ոստիկանները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ նշված հանցագործությունները կատարել են Վերին Արտաշատ գյուղի բնակիչ 17 եւ 19 տարեկան երկու երիտասարդ: Նրանք մայիսի 5-ին հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել են Շենգավիթի բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Երիտասարդները կալանավորվել եւ տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է:

ՄԵԿ ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Վեդիում անչափահասներին առնչվող գործով մեկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով: Այս մասին հայտնում են ՔԿ-ից:

Հիշեցնենք՝ Արարատի մարզի Վեդի քաղաքում անչափահաս քույրերի վերաբերյալ հանրային լայն արձագանք ստացած դեպքով 2 անձ էր ձերբակալվել:

Ավելի վաղ Գլխավոր դատախազությունից հայտնել էին, որ քրեական հետապնդում է հարուցվել Ա. Ե.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (խոցելի վիճակում գտնվող անչափահասի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը) եւ Դ. Ա.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (3 դրվագ):

● *Մայիսի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է ֆիզիկական ներգործության 6 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 7-ին որոշումներ է ստորագրել, որոնց համաձայն՝ մի շարք նախարարներ եւ մարզպետներ մայիսի 8-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում արձակուրդ են գնացել, որպեսզի մասնակցեն նախընտրական քարոզարշավին: Արձակուրդ մեկնածների մեջ է նաեւ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Փաշինյանի կողմից 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը: Արձակուրդ է վերցրել նաեւ Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը: Նա մայիսի 7-ին Ֆեյսբուքի իր էջում հայտարարություն է զետեղել, ուր մասնավորապես նշված է. «Վաղվանից արձակուրդում եմ լինելու, սակայն այդ օրերն ինձ համար լինելու են ոչ թե հանգստի, այլ՝ պատասխանատվության ու նվիրումի օրեր: Ամբողջ ներուժով ներգրավվելու եմ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզարշավին՝ աջակցելով իմ քաղաքական թիմին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ հանուն մեր երկրի խաղաղ, անվտանգ եւ արժանապատիվ ապագայի»: Ա. Ճաղարյանը 2015-2021թթ. Իջեւանի համայնքապետարանում աշխատել է որպես համայնքի ղեկավարի տեղակալ, 2021թ. ապրիլի 8-ին վարչապետի որոշմամբ նշանակվել Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Ա. Ճաղարյանը 2021թ. նոյեմբերի 14-ին կայացած Իջեւան համայնքի ավագանու ընտրությունների արդյունքներով ձեւավորված ավագանու կողմից ընտրվել է համայնքի ղեկավար: Այս տարվա աշնանը Իջեւան խոշոր համայնքում նախատեսված են համայնքի ավագանու հերթական ընտրություններ:

ԴԻՄԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Գրող, լրագրող, խմբագիր, 53 տարի Իջեւանի քոլեջում դասախոս աշխատող Զավեն Ալավերդյանը համացանցում բաց նամակով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որով հայտնել է դասերի ընթացքում քոլեջի դռները բանալիով փակելու խնդրի մասին իր բարձրաձայնելու հետեւանքով ստացած նկատողության մասին: Զ. Ալավերդյանը հայտնել է. «Ձեզ գրում է կես դարից ավելի կրթության ոլորտում աշխատած անձ: Վերջերս Տավուշի Պ. Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ-հիմնադրամի ելքերը դասերի ընթացքում կողպվում են, շուրջ 350 ուսանողների եւ 80 աշխատակիցների կյանքի եւ առողջության համար ստեղծելով վտանգավոր իրավիճակներ՝ հնարավոր երկրաշարժերի, հրդեհների եւ այլնի դեպքում, կոպտորեն խախտելով համապատասխան կանոնները: Այդ առիթով հրապարակում ունեցա իմ ֆեյսբուքյան էջում՝ մտահոգությունս պատկան մարմիններին հաղորդելու համար: Եւ օ՛ զարմանք, քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանի ձեռամբ մտահոգությանս համար ինձ նկատողություն տրվեց: Համոզված եմ, որ տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանը կստանա իր արժանի պատիժը. անկախ այն բանից, թե որ պաշտոնյան է կանգնած նրա թիկունքին, եւ ԿԳՄՍ նախարարը կվերացնի իմ հանիրավի ստացած նկատողությունը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՇՈՒՇԻ

ՄԱՅԻՍԻ 8-Ը ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՆ Է

Մայիսի 8-ին Արցախի պաշտպանության բանակը եւ կամավորական ջոկատներն ազատագրեցին Շուշին:

Շուշիի ազատագրումը հայկական ռազմական ուժերի առաջին նշանակալից հաղթանակն էր Արցախյան ազատամարտում: Ռազմական գործողությունն անցկացվեց 1992 թ. մայիսի 8-9-ին: Մշակման եւ իրականացման առումով գրեթե անթերի, հայ ռազմարվեստի մեջ եզակի ռազմական գործողություն, որով արմատական բեկում առաջացավ Արցախյան ազատագրական պատերազմում: Գործողությունն իրականացվեց 4 ուղղություններով՝ միաժամանակյա հարձակումներով՝ մայիսի լույս 8-ի գիշերը՝ ժամը 2.30-ին, Քիրսի ռազմական դիրքերը գրավելուց եւ Լաչին-Շուշի ճանապարհը հսկողության տակ վերցնելուց հետո: Ռազմական գործողությունը ղեկավարում էր Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադեւոսյանը:

Շուշիի ազատագրման օպերատիվ պլանը մշակվել էր հենց նրա գլխավորությամբ, ինչին զինվորականները ձեռնամուխ եղան խոջալուն ազատագրելուց անմիջապես հետո: Պլանը կազմվել էր մարտ-ապրիլ ամիսներին՝ հետախուզական խմբերի կողմից հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերն ու քանակական տվյալները ճշգրտելուց հետո: Հարձակման ճակատային գիծը շուրջ 25 կմ էր: Հակառակորդը հայկական կողմին գերազանցում էր կենդանի ուժով եւ սպառազինությամբ: Ապրիլի 28-ին արդեն վերջնականապես որոշվել, ճշգրտվել էին հարձակման գլխավոր ուղղությունները, հրամանատարները, առկա զենք ու զինամթերքի քանակը: Լ. Մարտիրոսովի հանձնարարությամբ, պատրաստվել էր Շուշիի տեղանքի մանրակերտը, որի վրա հրամանատարները ճշգրտել էին իրենց գործողություններն ու ընթացիկ ուղղությունները:

Ռազմագործողությունը ղեկավարում էին Շոշից հյուսիս գտնվող բարձունքի վրա տեղակայված եւ 4 այլ հրամանատարական դիտակետերից: Հարձակումը նախատեսված էր սկսել դեռեւս մայիսի 4-ին, բայց տարբեր պատճառներով (սպառազինության պակաս, վատ եղանակ եւ այլն) հետաձգվել էր: ԻՊՈ-ի շուրջ 1200 մարտիկներից բաղկացած 4 հարձակողական եւ 1 պահեստազորային խմբերը մայիսի 8-ի գիշերը միաժամանակ անցան հարձակման: Ռազմական գործողության ելքը կանխորոշվել էր արդեն իսկ մայիսի 8-ին, երբ Լաչինի եւ մյուս ուղղությունների ստորաբաժանումները նպաստավոր բնագծեր էին գրավել Շուշիի մատույցներում: Մայիսի 8-ի երեկոյան կողմ տրված դադարը հակառակորդին հնարավորություն էր ընձեռել հատկացված միջանցքով հեռանալ բերդաքաղաքից:

Կեսօրին մոտ հարձակման անցան հակառակորդի 1 ռազմական ինքնաթիռ եւ ուղղաթիռներ, որոնք ռմբակոծում էին հայկական ուժերի մարտաշարքերը, ինչպես նաեւ Շուշին ու Ստեփանակերտը: Ավելի ուշ պարզվեց, որ այդ օդային հարձակման նպատակը Շուշիում թողնված զինապահեստները պայթեցնելն էր, դրանով ադրբեջանցիները հույս ունեին կործանել ամբողջ քաղաքը, ինչը նրանց չհաջողվեց: Երեկոյան կողմ հիմնականում ավարտվեց Շուշիի ազատագրման գործողությունը: Մայիսի 9-ին հինավուրց հայկական բերդաքաղաքն ազատագրված էր:

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Իրանը նոր պահանջներ է ներկայացրել Հորմուզի նեղուցով անցնող նավերի համար՝ փորձելով պաշտոնականացնել վերահսկողությունը աշխարհի ամենակարեւոր ծովային ուղիներից մեկի նկատմամբ: Այս մասին հայտնում է CNN-ը՝ հղում անելով իր տրամադրության տակ հայտնված փաստաթղթերին:

Թեհրանը ստեղծել է նոր կառույց՝ Persian Gulf Strait Authority (PGSA), որը նավերից պահանջում է նախապես լրացնել հատուկ հայտ՝ նեղուցով անվտանգ անցում ստանալու համար: Փաստաթուղթը, որը կոչվում է «Vessel Information Declaration», ներառում է ավելի քան 40 հարց՝նավի, սեփականատերերի, անձնակազմի եւ բեռի վերաբերյալ:

Ըստ նոր կարգի՝ նավերը պետք է նախապես էլեկտրոնային փոստով ուղարկեն պահանջվող տեղեկությունները, հակառակ դեպքում կարող են բախվել հարձակման կամ անցման արգելքի վտանգին:

Մինչ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունների մեկնարկը Իրանի դեմ՝ փետրվարի վերջին, Հորմուզի նեղուցը բաց էր բոլոր երկրների նավերի համար: Սակայն պատերազմի սկսվելուց հետո Իրանը հայտարարել էր, որ առանց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի թույլտվության նեղուցով անցնող նավերը կարող են թիրախավորվել:

CNN-ի տվյալներով՝մի շարք նավեր արդեն ենթարկվել են հարձակումների, ինչի հետեւանքով բազմաթիվ նավատերեր հրաժարվում են առանց Իրանի համաձայնության օգտվել այդ երթուղուց:

Հորմուզի նեղուցով անցնում է աշխարհի նավթի եւ հեղուկացված բնական գազի մոտ մեկ հինգերորդը, եւ փորձագետները նշում են, որ Իրանի վերահսկողությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության վրա:

Իրանի գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեին Telegram-ում հրապարակված ուղերձում հայտարարել է, որ ցանկանում է ձեւավորել «նոր տարածաշրջանային եւ գլոբալ կարգ՝ուժեղ Իրանի ռազմավարությամբ»: Նա նշել է, որ Հորմուզի նեղուցի փակումը կարող է դառնալ այդ ռազմավարության գործիքներից մեկը:

Միաժամանակ հաղորդվում է, որ Իրանը կարող է մինչեւ 2 միլիոն դոլար վճար պահանջել յուրաքանչյուր նավից՝ անվտանգ անցման համար: ԱՄՆ ֆինանսների նախարարությունն արդեն հայտարարել է, որ նման վճարումները չեն թույլատրվելու ամերիկյան ընկերությունների եւ քաղաքացիների համար:

Ծովային վերլուծաբանների գնահատմամբ՝ եթե Իրանը երկարաժամկետ վերահսկողություն հաստատի նեղուցի նկատմամբ, ապա նավերի անցումը կարող է կազմել մինչպատերազմյան մակարդակի ընդամենը 40-50 տոկոսը, ինչը կշարունակի ճնշում գործադրել համաշխարհային նավթի եւ գազի շուկաների վրա:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Անցած 1 օրում գրանցվել է 9 ավտովթար. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Գ

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ DEG GREEN DAYS ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Հայէկոնոմբանկը մասնակցեց KFW խմբի անդամ DEGԳերմանական ներդրումների եւ զարգացման ընկերության (Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH) կողմից գործընկեր ֆինանսական հաստատությունների համար կազմակերպված Green Days համաժողովին, որն անցկացվում էր Ստամբուլում:

Ս. թ. ապրիլի 29-30-ին անցկացված միջոցառմանը Հայէկոնոմբանկից մասնակցում էին Միջազգային գործառնությունների վարչության պետ Լեւոն Մովսիսյանը, Միջոցների ներգրավման եւ առեւտրի ֆինանսավորման բաժնի պետ Սարգիս Ծատուրյանը եւ Հայէկոնոմբանկի Շրջակա միջավայրի եւ սոցիալական ռիսկերի կառավարման բաժնի պետ Աննա Եղոյանը:

Երկօրյա ինտենսիվ ելույթներն ու քննարկումներն ուղղված էին կայուն ֆինանսների, կանաչ ներդրումների եւ ցածր ածխածնային տնտեսության առաջմղման գործում ֆինանսական հաստատությունների աճող դերակատարությանը: Միջոցառումը մասնագիտական երկխոսության կարեւոր հարթակ էր Թուրքիայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի ֆինանսական ոլորտի ներկայացուցիչների համար:

«Հայէկոնոմբանկը շնորհակալ է մեր ռազմավարական գործընկերոջը՝ Գերմանական ներդրումների եւ զարգացման ընկերությանը, հրավերի եւ համաժողովին մասնակցության հնարավորության համար: Այն արժեքավոր հարթակ էր ոչ միայն կայուն ֆինանսավորման նորագույն լուծումների եւ ուղղությունների վերաբերյալ մեր մասնագիտական գիտելիքները հարստացնելու, այլ նաեւ տարածաշրջանային գործընկերների հետ փորձի փոխանակման եւ նոր կապերի հաստատման համար: Լիահույս ենք, որ տարածաշրջանային համագործակցության այս ձեւաչափը շարունակական կլինի, եւՀայէկոնոմբանկը կշարունակի ակտիվ դերակատում ունենալ այս համատեքստում», - նշում է Լեւոն Մովսիսյանը:

Հայէկոնոմբանկը, հեղինակավոր ֆինանսական կառույցների հետ համագործակցությամբ, շարունակում է քայլեր ձեռնարկել կանաչ ֆինանսավորումը որպես ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու եւ զարգացնելու համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՅՈՒՆԻԲԱՆԿ Գ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Մայիսի 5-6-ը կայացած «Yerevan Dialogue 2026» միջազգային համաժողովը համախմբել էր տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների եւ ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների՝ Երեւանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովից անմիջապես հետո:

Յունիբանկը երկրորդ տարին անընդմեջ հանդես եկավ որպես «Yerevan Dialogue» համաժողովի գործընկեր: Այս մասնակցությունը եւս մեկ անգամ ընդգծեց Յունիբանկի պատրաստակամությունը՝ ակտիվորեն ներգրավվելու միջազգային կարեւոր հարթակներում եւ նպաստելու թվային անվտանգության ու ֆինանսական կայունության զարգացման համաշխարհային օրակարգին:

Յունիբանկի Վարչության նախագահի առաջին տեղակալ Արարատ Ղուկասյանը մասնակցեց «Կիբեռդիմակայունությունն արհեստական բանականության դարաշրջանում. պետությունների, ենթակառուցվածքների եւ վստահության պաշտպանություն» խորագրով պանելային քննարկմանը, որի ընթացքում անդրադարձ կատարվեց թվային դարաշրջանում պետությունների, հաստատությունների եւ հասարակությունների առջեւ ծառացած նոր մարտահրավերներին եւ խոցելիություններին:

Քննարկման մասնակիցները խոսեցին կիբեռանվտանգության, տնտեսական կայունության եւ ազգային անվտանգության միջեւ աճող փոխկապակցվածության մասին՝ պետական կառույցների եւ կենսական նշանակության ենթակառուցվածքների արագացող թվայնացման պայմաններում: Մասնակիցները կարեւորեցին դիմակայունության ապահովմանն ուղղված մոտեցումները՝ ներառյալ ինստիտուցիոնալ պատրաստվածությունը, պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդումը եւ կիբեռսպառնալիքներին արձագանքման միջազգային համակարգման ընդլայնումը:

«Արհեստական բանականությունն ու թվային փոխակերպումն արագորեն վերափոխում են ֆինանսական ոլորտը՝ կիբեռանվտանգությունը, դիմակայունությունն ու կառավարումը դարձնելով ռազմավարական առաջնահերթություններ: Գնահատականների համաձայն՝ ապատեղեկատվական արշավների գլոբալ տնտեսական հետեւանքները մինչեւ 2026 թվականը կարող են հասնել 26 մլրդ դոլարի, ինչը սպառնալիք է հանրային վստահության համար: Անվտանգության ավանդական մեթոդներն այլեւս բավարար չեն, եւ բանկերը պետք է ներդնեն բազմաշերտ պաշտպանական համակարգեր ու զարգացնեն միջոլորտային համագործակցությունը», - նշեց Արարատ Ղուկասյանը: Նրա գնահատմամբ՝ ոլորտն անցում է կատարում ծախսերի կրճատումից դեպի երկարաժամկետ ռազմավարական ներդրումներ՝ ուղղված կայունությանն ու նորարարությանը: Այսօր Յունիբանկը POS-վարկավորման առաջատարներից է՝ կիրառելով արհեստական բանականության վրա հիմնված վարկունակության ժամանակակից գնահատման համակարգ: Քննարկման մասնակիցները եզրակացրին, որ կիբեռդիմակայունության ամրապնդումը կարեւոր է ոչ միայն ենթակառուցվածքների եւ թվային համակարգերի պաշտպանության, այլեւ հանրային վստահության, պահպանման եւ թվային միջավայրում կայունության ապահովման համար:

ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՉՔՈՎ Գ

ArmLur.am լրատվականը կրկին Defanse Housing թաղամասում է Կառուցապատողը շարունակում է շաբաթական երկու անգամ կազմակերպել գնորդների համար շրջայց նորակառույց թաղամասի տարածք, որտեղ եւ տիվեցին աղագա բնակիչների հետ, որոնք կիսվեցին իրենց տպավորություններով:



1.2 հա մակերեսով միջբակային տարածքների կանաչապատ գոտիավորումները, ինչպես նաեւ շուրջ 14 մ լայնությամբ ներթաղամասային ճանապարհների առկայությունը բնակիչների կողմից գնահատվում է որպես հանգիստ եւ հարմարավետ միջավայրում բնակվելու գրավական: Դեֆանսի երիտասարդ բնակիչների խոսքով՝ առաջնային խնդիրը լուծված է:

Թաղամասում արդեն հիմնված է 40 հա մակերեսով կենտրոնական անտառպուրակը: Արդեն տնկված տասնյակ հազարավոր ծառերը, էկզոտիկ բուսատեսակներն ու ծաղկեթփերը, ինչպես նաեւ 5 շատրվանային կոմպլեքսները անմիջապես զգացնել են տալիս զով միկրոկլիմա ունենալու կարեւորությունը: Ստեղծված են բոլոր հարմարությունները տարբեր նախասիրություն ունեցող բնակիչների համար:

Defanse Housing թաղամասում հարմարավետությունը սկսվում է բնակարան ձեռք բերելու պահից. այստեղ գործում է եկամտային հարկի վերադարձի մասին օրենքը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՆԲ խումբը (ԵՆԲ եւ ԵՆՀ) կտրամադրի մասնակի պորտֆելային երաշխիք՝ աղահովելով մինչեւ 106.25 միլիոն եվրոյի նոր ֆինանսավորման հնարավորություն ՓՄՁ-ների համար: Ակնկալվում է, որ նախաձեռնությունից կօգտվի շուրջ 900 փոքր բիզնես՝ նպաստելով ավելի քան 5000 աշխատատեղերի պահպանմանը: Երաշխիքը աղահովված է Եվրոպական միության կողմից՝ «ԵՄ-ն բիզնեսի համար» (EU4Business) երաշխիքային գործիքի շրջանակներում: Սա ԵՆԲ խմբի երկրորդ ուղղակի գործարքն է Ամերիաբանկի հետ:

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) եւ Եվրոպական ներդրումային հիմնադրամը (ԵՆՀ), որոնք միասին ներկայացնում են ԵՆԲ խումբը, միավորում են ուժերն Ամերիաբանկի հետ՝ Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման հասանելիությունն ընդլայնելու համար: Գործարքն իրենից ներկայացնում է մասնակի պորտֆելային երաշխիք, որը թույլ կտա Ամերիաբանկին ձեւավորել մինչեւ 106.25 միլիոն եվրոյի նոր վարկային պորտֆել՝ նպաստելով բիզնեսի աճին եւ տնտեսական կայունությանը:

Այս նոր նախաձեռնությունը հիմնված է ԵՆԲ-ի եւ Ամերիաբանկի միջեւ արդեն իսկ առկա գործընկերության վրա եւ հաստատությունների միջեւ երկրորդ ուղղակի գործարքն է: Դրա նպատակն է բարելավել ֆինանսավորման հասանելիությունը հայկական ՄՓՄՁ-ների համար, մասնավորապես այն ձեռնարկությունների, որոնք դժվարություններ են հանդիպում մատչելի ֆինանսավորում ստանալու հարցում:

Ակնկալվում է, որ գործարքը կաջակցի շուրջ 900 ՄՓՄՁ-ների եւ կնպաստի ավելի քան 5000 աշխատատեղի պահպանմանն ամբողջ Հայաստանում՝ նպաստելով երկրի տնտեսական զարգացմանը եւ մասնավոր հատվածի աճին: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ Երեւանում՝ Ամերիաբանկի ֆինանսական գծով տնօրեն Հովհաննես Թորոյանի եւ ԵՆԲ փոխնախագահ Կարլ Նեհամերի մասնակցությամբ: Միջոցառմանը Եվրոպական միության անունից ելույթ ունեցավ Հայաստանում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսը:

ԵՆԲ փոխնախագահ Կարլ Նեհամերը, որը վերահսկում է ԵՆԲ գործունեությունը Հայաստանում, ասաց. «-Փոքր բիզնեսները Հայաստանի տնտեսության հենասյունն են, եւ ֆինանսավորման հասանելիությունը կարող է վճռորոշ դեր ունենալ նրանց աճի համար: Այս համաձայնագրի շնորհիվ մենք ձեռնարկատերերի համար ստեղծում ենք ներդրումներ կատարելու, ընդլայնվելու եւ ավելի կայուն բիզնես կառուցելու իրական հնարավորություններ: Լավ գաղափարները չպետք է թղթի վրա մնան ֆինանսավորման պակասի պատճառով»:

Երաշխիքը հնարավոր է դարձել Եվրոպական միության կողմից «ԵՄ-ն բիզնեսի համար» (EU4Business) երաշխիքային գործիքի շրջանակներում տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ: Այս նախաձեռնությունն իրականացվում է ԵՄ-ի ավելի մեծ ջանքերի շրջանակներում, որոնք ուղղված են կայուն տնտեսական զարգացման խթանմանը, մրցունակության բարձրացմանը եւ Հայաստանում նորարարությանը աջակցելուն:

Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը նշեց. «Փոքր բիզնեսին աջակցելը նշանակում է աջակցություն աշխատատեղերի ստեղծմանը, նորարարությանը եւ երկարաժամկետ կայունությանը: Ամերիաբանկի եւ ԵՆԲ խմբի այս գործընկերության միջոցով մենք օգնում ենք հայկական ընկերություններին, որպեսզի վերջիններս հասանելիություն ստանան առաջ շարժվելու, զարգանալու եւ նոր շուկաներ գտնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներին: Այսօր ստորագրված երաշխիքային համաձայնագիրը վերջերս ընդունված՝ ԵՄ-Հայաստան գործընկերության ռազմավարական օրակարգի ներքո մեր քաղաքական եւ տնտեսական համագործակցությունն ընդլայնելու իրական օրինակ է: Ռազմավարական օրակարգը վերահաստատում է Եվրոպական միության հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանին հասարակության կայունությունը եւ տնտեսական մրցունակությունն ամրապնդելու հարցում՝ երկու գործոն, որոնք անբաժանելի են մասնավոր ներդրումների եւ նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացներից»:

Ամերիաբանկի ֆինանսական գծով տնօրեն Հովհաննես Թորոյանը եզրափակեց. «Փոքր բիզնեսին աջակցությունը ռազմավարական ուղղություն է Ամերիաբանկի համար: Այս համագործակցությունը մեզ թույլ է տալիս ձեռք մեկնել ավելի շատ բիզնեսների, որոնք պատրաստ են աճել, բայց ճիշտ ֆինանսական աջակցության կարիքն ունեն: Ընդլայնելով ֆինանսավորման հասանելիությունը՝ մենք կշարունակենք օգնել ձեռնարկատերերին կյանքի կոչել իրենց ծրագրերը, խթանել իրենց գործունեությունը եւ, ամենակարեւորը, ավելի ակտիվ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Մեր գործընկերությունն ուղղված է ամենակարեւոր ոլորտում առաջընթաց ապահովելուն»:

Ընդհանուր տեղեկատվություն ԵՆԲ խումբ

Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) խումբը Եվրոպական միության ֆինանսավորման ճյուղն է, որը պատկանում է 27 անդամ պետություններին՝ հանդիսանալով աշխարհի խոշորագույն բազմակողմ զարգացման բանկերից մեկը: 2025 թվականին ԵՆԲ խումբը ստորագրել է 100 միլիարդ եվրոյի նոր ֆինանսավորման եւ խորհրդատվական ծառայությունների համաձայնագրեր բարձր ազդեցության ավելի քան 870 նախագծերի համար՝ ԵՄ քաղաքականության նպատակների իրագործմանը նպաստող ութ հիմնական առաջնահերթ ուղղությունների ներքո՝ կլիմային վերաբերող գործողություններ եւ շրջակա միջավայր, թվայնացում եւ տեխնոլոգիական նորարարություն, անվտանգություն եւ պաշտպանություն, տարածքային համախմբվածություն, գյուղատնտեսություն եւ կենսատնտեսություն, սոցիալական ենթակառուցվածքներ, ամուր համաշխարհային գործընկերություններ, խնայողությունների եւ ներդրումների միություն: Ի լրումն խոշոր ենթակառուցվածքների համար նախատեսված երկարաժամկետ վարկերի, ԵՆԲ խումբը ներգրավում է մասնավոր ներդրումներ բարձր ռիսկային նորարարական նախագծերի եւ բիզնեսների համար՝ ավելի ու ավելի կարեւոր դեր խաղալով վենչուրային պարտքի, վենչուրային կապիտալի, երաշխիքների եւ արժեթղթերի եվրոպական շուկաներում:

Եվրոպական ներդրումային հիմնադրամը (ԵՆՀ) ԵՆԲ խմբի դուստր ձեռնարկությունն է, որը մասնագիտանում է երաշխիքների եւ կապիտալի տրամադրման մեջ՝ Եվրոպայում փոքր եւ միջին ձեռնարկությունների ու ստարտափների համար ֆինանսավորման հասանելիությունը բարձրացնելու համար: Հանդես գալով որպես «խարիսխային» ներդրող՝ ԵՆՀ-ն մոբիլիզացնում է մասնավոր ներդրումները գործընկեր բանկերի եւ ներդրումային ֆոնդերի իր լայն ցանցի միջոցով եւ զարգացնում վենչուրային կապիտալի ֆոնդերի էկոհամակարգը՝ եվրոպացի նորարար ձեռնարկատերերին աջակցելու համար:

2023 թվականին ԵՆՀ-ն վեց անդամ պետությունների (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Բելգիա եւ Նիդերլանդներ) հետ համատեղ մեկնարկեց «Եվրոպական տեխնոլոգիական չեմպիոնների նախաձեռնությունը» (European Tech Champions Initiative), որը նորարարական ստարտափների ընդլայնման համար նախատեսված հիմնադրամների հիմնադրամ է: Մինչ օրս այդ նախաձեռնությունն արդեն հնարավոր է դարձրել եվրոպական վենչուրային կապիտալի 14 մեգահիմնադրամի ստեղծումը եւ 43 ընկերության ընդլայնումը, ներառյալ 11 «միաեղջյուր» ընկերություն (ավելի քան 1 միլիարդ եվրո կապիտալով):

ԵՆԲ խմբի ներկայացուցիչների եւ գլխամասային գրասենյակի լուսանկարները, լոգոտիպի ֆայլերը եւ լրատվամիջոցների համար նախատեսված լրացուցիչ տեսանյութերը հասանելի են այստեղ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը շարունակաբար ներդնում եւ կատարելագործում է նորարարական պրոդուկտներ, ծառայություններ եւ հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Անգլիական «Ասթոն Վիլա»-ն ու գերմանական «Ֆրայբուրգ»-ը դուրս են եկել Եվրոպա Լիգայի եզրափակից:

Կիսաեզրափակչում «Ասթոն Վիլա»-ն մրցել է մեկ այլ անգլիական ակումբի՝ «-Նոթինգհեմ Ֆորեստ»-ի հետ ու 2 դիմակայությունների արդյունքում հաղթել 4:1 հաշվով: «Ֆրայբուրգ»-ն էլ 4:3 հաշվով գերազանցել է պորտուգալական «Բրագա»-ին:

Եվրոպայի Լիգայի եզրափակիչը կայանալու է մայիսի 20-ին Ստամբուլի «-Բեշիկթաշ» մարզադաշտում:

Մայիսի 27-ին Գերմանիայի Լայպցիգ քաղաքի «Ռեդ Բուլ Արենա»-ում Կոնֆերենցիայի Լիգայի եզրափակչում էլ կմրցեն «Քրիստալ Փելաս»-ն ու «Ռայո Վալեկանո»-ն:

ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄՂԱՎԱՆՋԸ

Ֆրանսիայի հավաքականի, «Արսենալի», «Մոնակոյի» եւ «Բարսելոնայի» նախկին հարձակվող Թիերի Անրին բարձր է գնահատել Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ի եզրային հարձակվողներ Ուսման Դեմբելեի եւ Խվիչա Կվարացխելիայի որակները:

«Դեմբելեն ու Կվարացխելիան պաշտպանների մղձավանջն են: Նրանք տարբեր միջոցներով ոչնչացնում են մրցակցի պաշտպանությունը: Մենք դա տեսանք նաեւ «Բավարիայի» դեմ պատասխան խաղում:

Կվարացխելիան խլեց գնդակը, նետվեց առաջ եւ կատարյալ փոխանցում կատարեց Դեմբելեին, որը մրցակցի դարպասը գրավեց արդեն երրորդ րոպեին: Արագ գոլը գործնականում վճռեց արդյունքը: Խվիչան ու Դեմբելեն հրաշալի են իրար հասկանում: Մեկը շեղում է պաշտպաններին, մյուսն օգտագործում է ազատ տարածությունը. անհավանական տեսարան է: Խվիչան իր դրիբլինգով եւ խաղադաշտը տեսնելու ունակությամբ քաոս է տարածում, իսկ Դեմբելեն սառնասրտորեն օգտագործում է հնարավորությունը»,- Անրիի խոսքը մեջբերում է L'Equipe-ը:

«Բավարիա» - ՊՍԺ պատասխան հանդիպումն ավարտվել է 1:1 հաշվով: Փարիզյան թիմը եզրափակիչ է դուրս եկել տանը տարած 5:4 հաշվով հաղթանակի շնորհիվ:

Մայիսի 30-ին Բուդապեշտում անցկացվելիք եզրափակիչում ՊՍԺ-ի մրցակիցը կլինի Անգլիայի փոխչեմպիոն եւ Պրեմիեր լիգայի ընթացիկ առաջատար Լոնդոնի «Արսենալը», որը կիսաեզրափակիչում պայքարից դուրս էր թողել Մադրիդի «Աթլետիկոյին» (1:1, 1:0):

● *Խամաճիկների պետական թատրոնում մայիսի 10-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Գեղեցկուհին եւ հրեշը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ հիմքերով է քաղաքացին ազատվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:
Վազգեն Գասպարյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.

2) մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն.

3) ընտանիքի միակ արու զավակն է եւ ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

4) Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում

ՀՀ պաշտպանության նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում եկամտահարկի վերադարձը եւ արդյոք կարող է ուշանալ:
Գասպար Այվազյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկառուին /համավարկառուներին/ եկամտային հարկի վերադարձը գանձապետարանը իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ուղեկցող գրությունը, որով ներկայացվում է վճարման հանձնարարականը, ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հարկ ենք համարում նշել, որ հիմնականում վերադարձն իրականացվում է վերոնշյալ գրությունը գանձապետարան մուտքագրման օրը, կամ հաջորդ աշխատանքային օրը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գրությունը ստացվել է բանկային օրվա ավարտից հետո:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Խոշոր հրդեհ Երեւանում. հրշեջները, մարելով կրակը, տանը հայտնաբերել են ազգությամբ հնդիկ տղայի կիսամոխրացած մարմինը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 5 + 14 + 18
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 + 14 + 17
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +16 + 19
Գեղարքունիք	+ 1 + 5 +11 + 15
Լոռի	+ 3 + 6 + 16 + 20
Տավուշ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +15 + 20

Արարատ	+ 8 + 10 +19 + 21
Արմավիր	+ 8 + 10 +21 + 24
Վայոց ձորի լեռներ	0 + 3 +10 + 14
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 12 + 20 + 23
Սյունիքի լեռներ	0 + 3 + 7 + 10
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 7 + 13 + 16
Սյունիքի հովիտներ	+ 11 + 14 +20 + 23
Երեւան	+ 9 + 11 + 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **08.05.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*